ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/13

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միհեր Անանյանի ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.01.2019թ. թիվ 26-3/570-19 գրությամբ «Մադէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 14.01.2019թ. թիվ ԴՎԱ/58 գրության հիման վրա, 18.01.2019թ. թիվ 26-3/570-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Մադէլ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Մադէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Մադէլ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերության և ՀՀ պաշտպանության նախարարության միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պետք է մատակարարեր ապրանքը 2018թ. սեպտեմբեր ամսին: Սակայն մինչև մատակարարումը ՀՀ պատպանության նախարարությունը պետք է մատակարարումից մեկ ամիս առաջ Ընկերությանը ներկայացներ մատակարարվող ապրանքների չափսերը, որը ամրագրված է պայմանագրի տեխնիկական բնութագրի վերջին նախադասության մեջ: Ընկերությունը 2018թ. օգոստոսի 16-ին դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը չափսերն ուղարկելու համար, սակայն պատասխան չի ստացվել, որի պատճառով էլ մատակարարում չի իրականացվել:

Ընկերությունը կից ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղարկված էլեկտրոնային նամակի լուսապատճենը արտատպված էլեկտրոնային փոստից:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/13 ընթացակարգի շրջանակներում 24.01.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.01.2019թ. թիվ ԴՎԱ/58 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Մադէլ» ՍՊԸ-ի միջև 15.06.2018թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-7/29-2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ Պատվիրատուն 27.12.2018թ. միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Միաժամանակ Պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 08.01.2019թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/13 ընթացակարգի շրջանակներում 24.01.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2019/13 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2019/13 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Մադէլ» ՍՊԸ-ի միջև 15.06.2018թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-7/29-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը, որի համաձայն «Մադէլ» ՍՊԸ-ն պարտավորվել է 2018թ. սեպտեմբեր ամսվա ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել 108 լ-կ «Ներքնաշոր տրիկոտաժե» ապրանքը:

2. «Մադէլ» ՍՊԸ-ին ուղղված 28.12.2018թ. թիվ ԴՎԱ/5334 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ Պատվիրատուն 27.12.2018թ. միակողմանի լուծել է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.01.2019թ. թիվ 26-3/570-19 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 14.01.2019թ. թիվ ԴՎԱ/58 գրությունը և կից փաստաթղթերը, «Մադէլ» ՍՊԸ-ի գրությունը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մադէլ» ՍՊԸ-ի միջև 15.06.2018թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-7/29-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն «Մադէլ» ՍՊԸ-ն պարտավորվել է 2018թ. սեպտեմբեր ամսվա ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել 108 լ-կ «Ներքնաշոր տրիկոտաժե» ապրանքը:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը («Մադէլ» ՍՊԸ) պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին (ՀՀ պաշտպանության նախարարություն) մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսվել է, որ ***ըստ չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:***

«Մադէլ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը 2018թ. օգոստոսի 16-ին դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը չափսերն ուղարկելու համար, սակայն պատասխան չի ստացվել, որի պատճառով մատակարարում չի իրականացվել:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի և 2.1.7.1 ենթակետով սահմանվել է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ Պայմանագրով նախատեսվել է, որ ***ըստ չափսերի մատակարարման ենթակա ապրանքի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:***

Այսինքն՝ Ընկերության կողմից Պայմանագիրը կատարելու պայման է հանդիսացել Պատվիրատուի կողմից մատակարարումից, որը նախատեսվել է իրականացնել 2018թ. սեպտեմբեր ամսին, առնվազն մեկ ամիս առաջ Ընկերությանը ըստ չափսերի քանակների տրամադրումը: Հակառակ դեպքում Ընկերության կողմից հնարավոր չէր կատարել պայմանագիրը, քանի որ վերջինիս պարտավորության կատարումը կախված է եղել Պատվիրատուի կողմից համապատասխան գործողություններ իրականացնելուց:

Ուսումնասիրելով գործում առկա նյութերն՝ արձանագրում եմ, որ գործում բացակայում է «ԳՀԱՊՁԲ-7/29-2» ծածկագրով պայմանագրի շրջանակներում Պատվիրատուի կողմից ըստ չափսերի ապրանքի քանակները «Մադէլ» ՍՊԸ-ին Պայմանագրով սահմանված ժամկետում տրամադրելու փաստը հավաստող որևէ ապացույց:

Միևնույն ժամանակ Ընկերությունն ինքն է փորձել համապատասխան էլեկտրոնային նամակով Պատվիրատուից ստանալ Պայմանագրով նախատեսված տեղեկությունները: Չնայած այն հանգամանքին, որ նշված էլեկտրոնային նամակն ուղարկվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/29» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին, այնուամենայնիվ, արձանագրում եմ, որ համաձայն տեխնիկական բնութագրի, ըստ չափերի քանակները Ընկերությանը պետք է տրամադրվեր Պատվիրատուի կողմից վերջինիս նախաձեռնությամբ:

Այսպիսով՝ գտնում եմ, որ «Մադէլ» ՍՊԸ-ն չի խախտել «ԳՀԱՊՁԲ-7/29-2» ծածկագրով պայմանագրով ստանձնած պարտավորություն, ուստի Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում և Ընկերությանը

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.01.2019թ. թիվ 26-3/570-19 գրությամբ «Մադէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**